Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական



Տասանորդի օրհնությունները

Մեզ պատվիրաններ տալու Աստծո նպատակն է մեզ օրհնելը: Նա ուզում է մեզ տալ հավերժական կյանք՝ Իր բոլոր պարգևներից մեծագույնը (տես ՎԿՈՒ 14.7): Սելեստիալ արքայությունում ընտանիքներով Նրա հետ հավերժ ապրելու պարգևը ստանալու համար մենք պետք է կարողանանք ապրել այդ արքայության օրենքներով (տես ՎԿՈՒ 88.22):

Նա տվել է մեզ պատվիրաններ այս կյանքում, որպեսզի մեզ օգնի զարգացնել այդ ունակությունը: Տասանորդի օրենքը այդ նախապատրաստական պատվիրաններից մեկն է: Օրենքն այն է, որ մենք Տիրոջը տանք մեր ամբողջ եկամուտի մեկ տասներորդ մասը: Այն բավականաչափ պարզ է և նույնիսկ երեխան կարող է հասկանալ դա: Ես տեսել եմ երեխաներ, որոնք եպիսկոպոսին են տվել տասանորդի ծրարը, որը պարունակում է նրանց վաստակած մետաղադրամների մեկ տասներորդը:

Օրհնություններից մեկը, որ գալիս է լրիվ տասանորդ վճարելուց, նույնիսկ ավելի բարձր օրենքով ապրելու հավատք զարգացնելն է: Սելեստիալ արքայությունում ապրելու համար մենք պետք է ապրենք նվիրաբերման օրենքով: Դրա համար մենք պետք է կարողանանք զգալ, որ մենք ամբողջությամբ և այն ամենը, ինչ մենք ունենք, պատկանում են Աստծուն:

Կան առնվազն երեք ուղիներ, որ վճարելով լրիվ տասանորդ այս կյանքում, պատրաստում են մեզ *զգալու* այն, ինչ մենք պետք է զգանք, որպեսզի ստանանք հավերժական կյանքի պարգևը:

Առաջինը, երբ մենք վճարում ենք մեր տասանորդները Եկեղեցուն, մեր Երկնային Հայրը օրհնություններ է թափում մեզ վրա: Ցանկացած մարդ, ով հետևողականորեն վճարել է լրիվ տասանորդ, գիտի, որ դա ճշմարիտ է: Օրհնությունները երբեմն հոգևոր են և երբեմն աշխարհիկ: Դրանք տրվում են Տիրոջ ժամանակին և համաձայն այն բանի, ինչը Նա գիտի, որ ամենալավն է մեզ համար:

Երբ այդ օրհնությունները գալիս են, մեր հավատքը մեծանում է առ այն, որ Աստված է ամեն բանի աղբյուրը, ինչը բարի է մեր կյանքում: Ավելի հեշտանում է տեսնելը, որ նվիրաբերումը պարզապես ընդունում է ճշմարտությունը, որ Աստծո բոլոր ստեղծածները Իրենն են: Այն մեզ ստիպում է երախտագիտություն *զգալ*, որ Նա պահանջում է միայն 10 տոկոսը այն ամենի, ինչը Նա արդեն տվել է մեզ: Այսպիսով, մենք ավելի լավ ենք պատրաստվում ապրել նվիրաբերման օրենքով, երբ այն պահանջվի մեզանից:

Երկրորդը, մենք բոլորս, ովքեր հետևողականորեն վճարել ենք լրիվ տասանորդ, ավելի մեծ վստահություն ենք *զգում*, երբ խնդրում ենք Աստծուց այն, ինչի կարիքն ունենք մենք և մեր ընտանիքները: Նա խոստացել է նույնիսկ ավելի շատ օրհնություններ, քան

մենք կարող ենք ընդունել, երբ մենք հավատարիմ ենք լինում մեր տասանորդները վճարելու մեր ուխտին (տես Մաղաքիա Գ.10)։ Այսպիսով, տասանորդի մեծագույն օրհնություններից մեկը վստահությունն է ապագայի հանդեպ։ Ինչ հանգամանքներում էլ որ մենք լինենք, ամեն ինչ կկարգավորվի լավագույն ձևով։ Մինչ մենք պահում ենք մեր խոստումները, Նա կպահի Իրենը։ Խաղաղության զգացումը լրիվ տասանորդ վճարելու մեծ օրհնություններից մեկն է։ Նրանք, ովքեր պահել են տասանորդի պատվիրանը, կարող են վկայել, որ խաղաղության օրհնությունը իրական է և թանկարժեք։

Երրորդը, նրանք, ովքեր տասանորդ են վճարում, *զգում են*, որ իրենց սերը մեծանում է Աստծո և Աստծո բոլոր զավակների հանդեպ։ Այդ մեծ սերը գալիս է հասկացողությունից, թե ինչպես է Հայրը օգտագործում բաները, որոնք մենք տրամադրում ենք՝ օրհնելու մարդկանց այս աշխարհում և հավերժության համար։

Իր լիազորված ծառաների միջոցով Նա ծախսում է տասանորդները մեծ հոգատարությամբ։ Տասանորդ վճարողն օգնում է Տիրոջը տաճարներ կառուցել, որտեղ ընտանիքները կարող են հավերժորեն կնքվել։ Տասանորդ վճարողը օգնում է Նրան ավետարանը տանել ամենուր գտնվող մարդկանց։ Տասանորդ վճարողն օգնում է Նրան թեթևացնել քաղցն ու տառապանքը Նրա իսկ ճանապարհով՝Նրա ծառաների միջոցով։ Այդ ծառաներից յուրաքանչյուրը կարող է ձեզ ասել, թե ինչպես է սերը մեծանում, քանի որ տասանորդն օգտագործվել է մարդկանց օրհնելու համար։ Եվ նույնը կարող է հավատարիմ տասանորդ վճարողը։

Մինչև տասանորդի կարգավորումը դեռ երկար ժամանակ կա։ Ես աղոթում եմ, որ դուք և ձեր ընտանիքը այժմ սկսեք ծրագրել և պատրաստվել որակվելու օրհնությունների համար, որոնք Աստված թափում է բոլոր նրանց վրա, ովքեր կարող են հայտարարել Նրան, որ իրենք լրիվ տասանորդ վճարողներ են։

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

- Երբեմն որոշակի սկզբունք սովորեցնելու լավագույն եղանակը այն ցուցադրելն է (տես *Teaching, No Greater Call* [1999], 164)։ Խնդրեք ընտանիքի անդամներից մեկին ցուցադրել, թե ինչ է իրենից ներկայացնում մեկ տասներորդը։ Նա կարող է դա ցուցադրել 10 առարկաներից բաղկացած խմբից առանձնացնելով մեկ առարկան։ Վերջում հրավիրեք ընտանիքի անդամներից մեկին ցույց տալ, թե ինչպես են լրացնում տասանորդի թերթիկը։
- «Նրանք, ում դուք սովորեցնում եք, օգուտ կքաղեն միմյանց մասնակցությունից» (*Teaching, No Greater Call,* 63)։ Հրավիրեք ընտանիքի անդամներին ասել, թե իրենց կարծիքով ինչ ի նկատի ունի Նախագահ Այրինգը, երբ ասում է «*զգալու* այն, ինչ մենք պետք է զգանք, որպեսզի ստանանք հավերժական կյանքի պարգևը»։ Կարող եք քննարկել երեք ուղիներ, որոնց միջոցով տասանորդ վճարելը նախապատրաստում է մեզ զգալու այն, ինչ մենք պետք է զգանք Աստծո օրհնությունները ստանալիս։

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Բավականաչափ գումար

Ֆաբիանո դոս Սանտոս դա Սիլվա

Ես հանդիպեցի միսիոներներին, երբ 17 տարեկան էի։ Այդ ժամանակ ես և ավագ եղբայրս միասին էինք ապրում։ Մեր մայրը մահացել էր մեկ տարի առաջ և կյանքը դժվար էր։ Երբ միսիոներները սովորեցրեցին ինձ, ես կարող էի տեսնել, որ Եկեղեցին էր այն միակ բանը, ինչը ես միշտ փնտրել էի։ Բայց իմ ընկերների ազդեցությունը խանգարեց ինձ կիրակի օրերը Եկեղեցի գնալ։

Մի անգամ ես գնացի շաբաթվա ընթացքում Եկեղեցու միջոցառման։ Ինձ մեծապես ուրախացրեց բոլոր երիտասարդների ծիծաղելն ու խաղալը տեսնելը։ Միսիոներները երիտասարդների հետ միասին, օգտվելով այդ հնարավորությունից, ինձ ավետարանի դաս սովորեցրեցին, և ես շատ լավ եմ զգում, որ որոշեցի մկրտվել։

Բայց նույնիսկ Եկեղեցուն միանալուց հետո ես դժվարությունների հանդիպեցի։ Ես քաղաքի այդ մասում Եկեղեցու միակ անդամն էի և ապրում էի հավաքատնից շատ հեռու։ Իմ ոչ անդամ ընկերները այլևս ցանկություն չունեին ինձ հետ շփվելու։ Երբ ես ինձ միայնակ զգացի, ես աղոթեցի և զգացի Տիրոջ սերը։

Ամեն ամիս ես ստանում էի մի փոքր գումար իմ

մոր թողած դրամական միջոցներից: Դժվար էր այդքան քիչ գումարով ինքս ինձ ապահովելը: Բայց ես վճռեցի հնազանդ լինել: Ես վճարեցի տասանորդ և նաև պետք է վճարեի սեմինարիայի և Կիրակնօրյա ժողովների ճանապարհածախսը: Ես չէի հասկանում, թե ինչպես, բայց ամսվա վերջում ես տեսնում էի, որ գումարը բավականացրել է այդ ամենի համար:

Ես գիտեմ, որ ես օրհնվել եմ տասանորդ վճարելով: Այս պատվիրանին հնազանդվելը օգնել է ինձ ստանալ ավելի ամուր վկայություն, միսիա ծառայել և օրհնություններ ստանալ, ինչն օգնել է ինձ ամրացնել նոր անդամներին, ովքեր դժվարությունների են հանդիպում:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ես կարող եմ տասանորդ վճարել

Տասանորդ վճարել նշանակում է մեր վաստակածի 10 տոկոսը տալ Տիրոջը: Պատկերացրեք տարբեր աշխատանքներ կատարող երեք երեխաների: Ենթադրենք, որ մեկը վաստակում է 100 դրամ, մյուսը վաստակում է 200 դրամ, և երրորդը վաստակում է 300 դրամ: Գրեք, թե որքան կլինի յուրաքանչյուր երեխայի տասանորդը:

Բոնուս հարց. Ո՞վ այս տասանորդ վճարողներից կստանա ամենաշատ օրհնությունները: (Հուշում. Տես Նախագահ Այրինգի ուղերձի վերջին պարբերությունը):

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *First Presidency Message, June 2011*-ի թարգմանությունը: Armenian: 09766 201

Ամրացնել ընտանիքները սեփական ուժերին վստահելու միջոցով

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Սեփական ուժերին վստահելու կարողություն զարգացնելը՝ մեր անձի և մեր ընտանիքների համար հոգալու կարողությունը, յուրաքանչյուր քրոջ պարտականությունն է: Մենք դարձել ենք ինքնավստահ, սովորելով սիրել աշխատանքը, ոգեշնչում փնտրելով ինքներս մեզ ապահովելու համար լավագույն միջոցներ գտնելիս, և աշխատելով ընտանիքի անդամներով ապահովել հիմնական պահանջները:

Երբ մենք ինքնավստահ ենք, մենք օգտագործում ենք մեր օրհնությունները և միջոցները՝ խնդիրների համար պատրաստվելու և դրանցից խուսափելու համար: Ինքնավստահությունը, ինչևիցե, մեծանում է, երբ մենք աղոթում ենք քաջության համար՝ խնդիրներին հավատքով դիմակայելու համար, որոնք անշուշտ պիտի գան: Ինքնավստահությունը նաև մեզ հնարավորություն է տալիս պահել ուրիշների համար հոգալու մեր ուխտը:

Սփոփող Միությունում մեզ սովորեցնում են ինքնավստահության սկզբունքներ և հմտություններ: Քույրերը կարող են սովորել ծախսերի ծրագրման, պարտքի նվազեցման, աշխատանքի որակավորումների, սուրբ գրությունների և ավետարանի, ուրիշներին կարդալ և ուսումնասիրել սովորեցնելու, տեխնոլոգիայի, ֆիզիկական առողջության, օգտակարության, կախվածության կանխման և առողջացման, հասարակական և հուզական առողջության, հիվանդության կանխման, այգեգործության, սննդի արտադրության և պահեստավորման, ծայրահեղ անհրաժեշտության պատրաստվածության և շատ այլ բաների մասին, որոնք կօգնեն մեզ դառնալ ինքնավստահ:[1]

Ջուլի Բ. Բեքը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, բացատրում է, որ «մեր սեփական և ուրիշների կարիքների համար հոգալը վկայում է այն մասին, որ մենք Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտներն ենք: . . . Երբ[իմ սկեսուրը] անցյալ տարի հանկարծակի մահացավ, նա վկայություն թողեց իր ինքնաապահով կյանքի մասին: Նա ուներ գործող տաճարային երաշխավորագիր և լավ օգտագործված սուրբ գրություններ և ուսումնասիրման ձեռնարկներ: Մենք սիրով բաժանեցինք կաթսաները, թավաները և ափսեները, որով նա հազարավոր ճաշեր էր պատրաստել: Նա մեզ թողել էր վերմակներ, որոնք պատրաստել էր հին հագուստից: Նա հավատում էր հին ասացվածքին. «Օգտագործիր, մաշեցրու, բավարարվիր կամ առանց դրա զոյատևիր»: Մենք տեսանք ուտելիքի պաշարը, որը նա աճեցրել էր, պահպանել և պահեստավորել: Մասնավորապես հուզիչ էին նրա հաշվետարական գրքերը, որոնցում նա հավատարմորեն գրանցել էր իր ծախսերը տարիներ շարունակ: Քանի որ նա հեռատես կյանք էր վարում, նա որոշ չափով գումար էր թողել, որը տնտեսել էր արտակարգ իրավիճակների համար, և նա չէր թողել ոչ մի պարտք: Ամենակարևորը, նա ուրիշ շատերի ուսուցանել էր ու ոգեշնչել այն հմտությունները, որոնք ինքը ձեռք էր բերել իր հավատարիմ կյանքում»: [2]

Սուրբ Գրություններից

Հովհաննես ԺԳ.34–35, Հակոբոս Ա.27, Մոսիա 4.26, Վարդապետություն և Ուխտեր 29.34–35, 38.30, 44.6

Մեր պատմությունից

Սփոփող Միության քույրերը միշտ մասնակցել են անհատներին ֆիզիկապես և հոգևորապես փրկելու աշխատանքին: Ամեն շաբաթ, երբ Նավուի Կանանց Սփոփող Միությունը հանդիպում էր, քույրերը տեղեկացնում էին կարիքի մեջ գտնվող մարդկանց մասին: Գումարի, ապրանքների, տաղանդների և ժամանակի

նվիրատվությունները առատորեն տրվում էին կարիքավորի հոգսը թեթևացնելու համար: Տառապանքը թեթևացնելու այս հիմնական աշխատանքը շարունակվեց՝ սերնդե սերունդ լինելով Սփոփող Միության աշխատանքը:

Երբ Սրբերը հասան Սոլթ Լեյքի հովիտ, Նախագահ Բրիգամ Յանգը (1801–77) խորհուրդ տվեց քույրերին աջակցել նրանց, ովքեր կարիքի մեջ են և հմտություններ սովորեցնել, որոնք նրանց թույլ կտան հոգալ իրենց իսկ կարիքները: Նա ասել է. «Սովորեք պահել ինքներդ ձեզ. կուտակեք հացահատիկ և ալյուր, և պահեք այն նեղ օրվա համար»:[3] Քահանայության ղեկավարման ներքո՝ Սփոփող Միությունը շարունակում է սովորեցնել ինքնավստահություն՝ ընտանիքն ապահովելու և անձնական արդարություն ու գթության գործեր՝ Քրիստոսի մաքուր սիրո արարքներ քաջալերելու համար:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 9.4.2.
2. Julie B. Beck, "The Welfare Responsibilities of the Relief Society President," *Basic Principles of Welfare and Self-Reliance* (2009), 6.
3. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 231.

1. Ինչպե՞ս ես կարող եմ օգնել իմ քույրերին և նրանց ընտանիքներին զարգացնել ինքնավստահություն:

2. Ինչպե՞ս ես կարող եմ մեծացնել իմ սեփական ինքնավստահությունը:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *Visiting Teaching Message, June 2011*-ի թարգմանությունը: Armenian: 09766 201